

ԱՎ. ԲՈՅՀԱԿՅԱՆ

Ակսու Մշեր

ՎԻՊԵՐԳ

89199
Դ-75

3052665
9 3 8

6 NOV 2011



SHIPS

891-99

Ե-75Ա. ԽՈՎՃԱԿԱՆ
ԱՆ.

ԱԱՍՄԱ ՄՀԵՐ

ՎԻՊՈՐԾ



ՏՊԸ

• 7 ՅԵՐԵՎԱՆ, ՀՅԱՅ •

Ս Ա Ս Մ Ա Մ Հ Ե Բ

Վ Ի Պ Ե Ր Գ

Ա Ռ Ա Զ Խ Ա Վ Ա Լ Ո Ւ Խ

Յելավ քաջ Դավիթ իշխան Սասունա,
 Կըոփիվ խոյացավ ի Մորա վըրա:
 Ու նրա յեանուց Խանդութ մհծ Տիկին
 Լիրութումն առավ,
 Լույս աշխարհ բերավ
 Մեկ արու զավակ՝ տեր ու ժառանչին
 Զօջանց աթոռքին, Սասմա աշխարհքին:

Ու հնուց ավանդ սուրբ սովորութքով
 Ժողվեցան յեկան Ջոշանց Տան պետեր,
 Մանկան բարուրի բինդերու փոխան
 Գութանի շղթան փաթթեցին վրան,
 Ու ասին իրար Աղնանց ավագներ,—
 «Թէ կոտրեց տղան կապանքն յերկաթին,
 Նա աղատ կուզե ու կրնա ձեռնել,
 Նա մեր ցեղեն և՝ առյուծ հոր վորդին».

Մանուկն եր. ճըշաց, ճըկեց ճեռն ու վոտ,
 Կոտրեց շղթալի ամեն հոգն ու զոդ:



1398

Համբակը տարան կովի դաշտ՝ Դավթին.
Ուն պատգամ ճամբեց դավթիթ Խանդութին.

«Իմ ակն-արեգակ հորըս անունով
Իմ կորյուն վորդուս
Կանչեցեք Մհեր.
Նա պիտի դառնա մեր աշխարհին տեր,—
Ով զյերկաթն իշխե՞ իշխանն և մարդուս»:

Ու չար որն հասավ՝
Մահացավ Դավթիթ՝ դյուցազբըն՝ առյուծ,
Մահացավ Խանդութ սրտի կոկըծուց.
Մնաց վորբ-մանուկ, անհեր ու անմեր
Իրենց մեկ հատիկ զավակը՝ Մհեր,

Ու Դավթի յեղբայր, ձնճղափորիկ,
Յելավ, աիրացավ Սասման անառիկ,
Տեր դարձավ Դավթի դանձին ու կալքին,
Վոր պահե, շահե Սասմա ժառանդին.

Մհեր թեև դեռ տղա յեր տկար
Իրեն ուժի տեր Սասուն մարդ չկար:
Հոր նման պարթե, աչքերն՝ ակն-արեվ,
Հայացքն՝ արծվենի, ճակատն՝ արքենի,
Մազերը՝ բոց-հուր,
Մեջք ու բաղուկներ՝ պողպատիկ ու կուռք
Ցոթ մարդու կերը կուտեր մեկ ժումով,

Ով տարով կ'աճեր՝ նա կ'աճեր ժամով,
Վես եր բնութքը, խրոխտ ու ըմբոստ,

Հրով, խանդով վառ,
Զայրույթի պահին՝ մթար ու մլար,
Հանց վոր Նեմրութ սար,

Սասմա սեպ սարեր վոաներն անդունդին,
Գլուխն՝ յերկնքին, ամպին ու շանթին,
Կը վաղեր Մհեր շանթի յետեն,
Փետուր կ'պոկեր արծիվի թեն:

Հորեղբայրն ասավ Մհերին մեկ որ,
«Գյողի հոտաղներ կերցըրին բոլոր
Մեր հանդն ու ածու. գընա, ակը տու,
Բան արա, վորդի, պարապ մի նստի»:

Ու կելներ Մհեր առավոտ-լուսին,
Կը կապեր ուսին
Գոմշինի մախաղ՝ հացով ու թացով,
Կերթար ժուռ կուգար Սասմա դար-դուրան,
Կը հսկեր Սասմա հանդ ու հանդաստան:
Սասմա դար-դուրան՝ աղրյուր հաղարան,
Նման սուրացող սեպ առյուծներուն՝
Բաշերն արծաթի՝ փուած քերծերուն:

Կը թիկներ Մհեր աղրրանց ակին,
Գողջ հացը կուտեր մեկ բրդուճ արած,
Ու որը բոլոր կը մնար քաղցած:

Իրկուն տուն դարձին կասեր հորեղբոր.

«— Եսոր ել որըս անցավ անոթի»:
— Ինչու, այ վորդի,
Սասնա մեր հանդեր լիքն են սինձ, բանջար,
Քաղե, կեր, ինչու կմաս անճար»

Կելներ Մհերը,
Գուշպերու մեջ կը սողոսկեր,
Ու վայրենի մեղուներու
Մորիսին ազնիվ կը հայաբեր.
Կուտեր Մհեր ու կուժովնար:
Կը մաղլցեր քերձերն ի վեր,
Արծիջներու վես ըներեն
Կը հավաքեր ձըվերն ամսն,
Ժեռ քարերը իրար կուտար,
Բոց կըհաներ ժեռեն զնար,
Կրակ կաներ, կը խորովեր
Արծիջ ձվեր,
Կուտեր Մհեր ու կուժովնար:
Կվոլորտեր վորսի համար
Շամբերու մեջ Անդատ գետի,
Անտառներով մութ ու մուր,
Առանց հունի, արահետի.
Ու կըվարգեր հովերու հետ
Փապերու սեջ ու վիշերու,
Ցետեն ընկած կըընկեվեթ
Վարադներու խենթ գիհերու:
Կելներ Մհեր լեռներու վեհ,
Հանց սուր աշտե,

Կատար ու քերձ, ամենաբերձ,
Ուր չի հասել վիթն իր վոտով
Հավքն իր թևով,
Ու կը ձեներ խանդով խրոխտ,
Արծիջի պես,
Ազատ ու վես:

Գոսուն-զոչունով Անտոկա բաշեն
Մեկ հեզ մեկ վեմ-քար
Փիել ու կուպար
Զոջանց վոչխարի փարախի վրեն:

Մհերն եր վազեց, թիկունքը հողոր
Քարին ոկմ տվալ, քարը կանգ առալ,
Ու մինչի հսոր
Կըֆիա կանգուն՝ փարախի գլխուն:

Իրկուն տուն դարձին՝ աւալ հորեղբոր.
— Սասնա ժեռ քարեր շեղերու նըման
Տըրեիներն վոտիս՝ մաշեցին, կերան:

— Կարկըտի, հազի, տառլ նեղորտած
Ճնճլդափուրիկ:
Քրթմնջաց Մհեր ու լարեց անահ
Աղեղն հոնքերու՝ հորեղբոր վրա:

«— Ես զեն մեկ որ փորձանք պիտի զա,
Քաջք և աժղանա, վիշապ զարհուրիկ,
Զի լոե սաստի, վոշ ել խրատի»:
Ահը սիրան առած

Խոսեց կնոջ հետ ձնձըղափորիկ:
Ու խորհուրդ արին,
Վոր մեկ պատճառով, հնար-հնձարով,
Վաննն Մհերին

Տնեն ու տեղեն.
Դագով ու խաբով, մեկ անդարձ ճամբով,
Վտարեն խսպառ Սասունա հողեն:
Ու իրենց վորդին՝ Փոքրիկ-ճնձըղիկ,
Վոր գիր կը սորվեր Մարութա սուրբ լանք,
Դարձնեն տեր-ժառանդ
Ազնանց աթոռքին,
Իշխան տիրական Սամանց աշխարքին:

Յելան ճամբեցին ջոջ-վերգոյի հետ
Մանուկ Մհերին պարեն-պաշարով,
Կապուտկողի սերդ,
Թանդութի հոր քով:

— Քո ջոջ պապ Մհեր,
Հորեղբալրն ասավ,
Քո կարոտն ունի,
Գնա, մարդիկ տես, աշխարհ պտըտի,
Բան սովորի, վորդիք:

Ու յեկավ Մհեր, հասավ կապուտկող,
Իրեն պապի հող,
Յոթ տարի բոլոր մնաց պապոնց տուն,
Մկունդ կըխաղար քերիներու հետ,

Կելներ վորսասար,
Ու նըանց հավսար՝
Կոփվ կը մտներ հազած ճոշ-ասպար:

Յեղավ վոր պապը որն հասավ, մեռավ:
Ու թեվա-թորոս՝ անդրանիկ քեռին,
Կանչեց Մհերին, ծաղրերես ասավ.—
«— Տհ, տխմար Մհեր, դու չըգիտե՞ս վոր,
Քո հոր բոին եր Սասունը հզոր.
Քո հալը ուներ տրկերով վոսկի,
Հողեր ու գյուղեր, ավան ու ապատ,
Հուր-հրեղեն ձին,
Ու թուր կալծակին:
Դու հիմի անհող քաշ գաս մեր դումն,
Հորեղբալրն ուտե քո հորըդ զանձը,
Դու ստար լերկիր մաշես քո անձը;
Վայ Զոջանց խելար, մուխըդ չմարի»:

—
Մհերն եր. յելավ
Լախտը ձեռքն առավ,
Ճամբան վոտքն առավ,
Վարեց ու հասավ Բանձրաթոռ Սասում,
Վոր յեկավ Սասուն, ծունը իշավ դետին,
Համբուրեց հողը Սասմա աշխարքին.
Ու սուրաց հանց նետ՝ դեպ Առյուծաբերդ,
Ազնանց հնութ յերդ:
Իրիկնաժամին մտավ դարբասն հոր,
Ու լցված սրտով ասավ հորեղբոր.—

— Յես լինեմ Սասմա ժառանգ ու իշխան,
Ինձ եսպես ձգես ուրիշի դռմն...

Խոսքը դեռ բերնին՝ ճընճըղափորիկ
Վոտ զարկեց տափին,
Գոռաց ահառիկ.
— Անիծվի են մարդ, վոր մեծ-սիրա վորբին
Թեի տակ կառնի ի վերաշխարհին,
Լախտն առավ Մհեր՝ վոր զարկեր նրան,
Զեռը չգնաց հորեղբոր վրան։
Գաղաղեց սաստիկ ճընճղափորիկ,
Գոռաց ահառիկ,
Ու մահակն առավ
Ծեծեց Մհերին, տնեն դուրս տրավ։
Յետ դառավ Մհեր, վոր զարկեր նրան,
Նորեն Մհերի ձեռք չգնաց
Հորեղբոր վրան։
Ու յելավ գնաց լալով, լաց-աղբով,
Յեկավ հոր ու մոր գերեզմանի քով,
Թողովթէուն խնդրեց հորեն ու մարեն,
Հեռացավ Սասմա հողեն ու ջրեն։

ԴԱՌԱԽ ԵԵՐԱՐՈՐԴ

— Մհեր զուրկ ու մերկ, ծարավ, անոթի
Ու վտարանդի,
Հեռուն աչքն առավ,
Ճամբան վոտքն առավ,
Գնաց ու հասավ Ճապաղջուրի գաշտ։
Վոր յեկավ հասավ Ճապաղջուրի գաշտ,
Տեսավ՝ ամառվա շողին կրակին,
Նստել ե ծառի քաղցրիկ ըլվաքին
Հարուստ մարդու մին կնոջ հետ մեկտեղ,
Կը խմե գինին, կուտե ձըլվաձեղ.
— Բարով քեզի բարին քեզի,
Մհեր ասավ,
Անոթի յամ, հաց տուր ուտեմ։
Հարուստն ասավ. — Արտս գնա,
Խիճերն հանե, քաղհան արա,
Քրտինք թափե, հաց կուտեմ՝ կե։

Յեկավ Մհեր ճորտերու քով,
Տեսավ՝ ճորտեր

Յեղունգներով, ազուռներով
Խիճ կը հանին արտի հողեն,
Արտ կը մաքրեն, գուղձեն, կոշտեն,
Մոլախոտեն:
Ինքն ել նման ձեռնեց գործին,
Ծնկածալիկ, արեբոցին,
Մեջքակոտոր ու քրտնաթոր,
Դատեց, բանավ մինչն իրկուն.
Յեղավ իրկուն,
Ճորտերու հետ դառ ու դադրած
Մտավ մեկ հուռդ՝ գեշ ու խավար,
Իրար վրա յեղան ծար,
Մեկ աստուն հաց տըզին՝ ուախ,
Մեկ չոր խշտի պառկի, քընի:

Մհեր պառկից, քուն չըտարավ.

Աշք չըփակեց ու վողջ գիշեր
Ախարհի բան միտք կաներ միտք
Զոջանց Մհեր.

«Ռամիկ չարաղատ
Չոր կուտե.

Հարուստ պարապ-մարդ
Մեղր կուտե»;

Առտուն կանուխ ճորտեր բոլոր
Ցիւան վոտքի,
Անխոս, անձեն կանդնան բանի.
Ու համբերեց մեկ-յերկու որ,

Վրա յերեքին
Խոսեց Մհեր մեջ իր մտքին.
«Ես ել կյանք չե.
Ես չար մահ ե,
Հացն ու ջուրը ես պէղծ տեղի —
Ու լեղին...»

Լախտը ձեռքն առավ,
Ճամբան վոտքն առավ,
Գընաց ու մտավ Վոստանա քաղաք:
Ու մեկ փոնապան

Մհերին առավ իրեն ձեռքի տակ:
Մհեր որ բոլոր ջուր, փայտ կը կըրեր
Ու գիշերն անքուն՝ ալուր կըմաղեր,

Խմոր կը շաղվեր, խմոր կը գնդեր.
Գլուխը բարձեն, աչքը չըկպած՝
Կը կանգներ վոտաց,
Իր բաժին հացը չեր բավե իրեն,
Հաց կառներ կուտեր ձեռք ընկած տեղեն,

Փռնապան տեսավ,
Բարկացավ, ասավ.
— Տո, ծակաչք, ծակփոր,
Սասունա վիշապ.
Ի՞նչ մնաց՝ ծախեմ,
Կերար վողջ-բոլոր:
Աչքերը Մհեր խոլորեց վրան,
Վախեն ձեն ու ձուն կտրեց փռնապան,

Ու հացերն առավ, փակի տակ դրավ:
 Մհեր մեկ մատով փականք կը կոտրեր,
 Հացերը կուտեր:
 Փոնապան նորեն սաստեց ու առավ.
 — Մհեր, դու ինչու փականք կը կոտրես,
 Հացերը կուտես:
 Ու րիշի հացին իրավունք չունես,
 Որենք կա, որենք,
 Պատիժ կա, պատիժ:

 Պողպատ իր ուսեր վեր քաշեց Մհեր,
 Ասավ զարմացած.
 — Եդ պատիժ, որենք յիս չեմ հասկանաւ
 Բա, ես որենք ե՝
 Դրժար բաները յես եմ անողը,
 Համով բաները դու յիս ուտողը,
 Թե գանձ կապողը:

Ու վոստան քաղքեն Մհեր
 Սիրտը խոլոր՝ չը կեց գընաց,
 Յեկավ հասավ Լաթաբա հով,
 Մտավ մեկ գլող:

 Ուսն եր, առավ վեստ Մհերին,
 Հանց վոր ճորտի, հացափորի,
 Ճամբեց կոռի,
 Ճամբեց կոռի դաշտն ու մերին
 Ու ալգեստան ավատի տան:

Որն ե հասել,
 Գեղջուկ, ուամիկ արտն են հնձել
 Հունձը փնջել, բերել կալսել
 Ու կալի մեջ դիղել շեղջ-շեղջ
 Ցուցլալն վոսկի ցորեն:

Յեկավ հեռվեն մեկ ծեր գուսան,
 Զեռքին քընար՝ գանգ մի յեզան,
 Յեղյուրներեն յերեք հատ լար
 Քաշած՝ ի վար:

Բարեվ տվավ, նստավ խուրձին,
 Զարկեց դաշըն պիրկ լարերուն,
 Փառքը լերգեց ավուր հացին:

«Փառք տվեք հացին,
 Ապա աստըծուն,
 Հացն ե աշխարքին
 Իսկն ազատություն:

Ասենք բուխ սլառով
 Ռամկին արև շատ,
 Պահող շահողին
 Աշխարհ արարատ:

Գովքն արեք ուամկին,
 Ռամկի սուրբ գործին,
 Զեր ազատության,
 Զեր արդար—հացինք:

Շարան-շարան յերկնուց իջան
Հավք ու թռչուն,
Ծլվացին շուրջը կալին
Ու բաժիններն առան թռան:

Յեկավ իշխան են արտատեր,
Կիսեց տարավ ցորենի շեղ,
Իրար յետնուց յեկան հասյան
Թե գեղապետ, թե խանութպան,
Առան տարան բնոս լ-թեռով,
Հարկի դիմաց, վաշխ ու պարտքին
Իր աչքի լույս ցորեն, —լոսկին,
Բան չըմնաց խեղճ ռամիկին—
Լոկ ծեղ ու կուտ կալատակին:

Ես գոր տեսավ՝ կը ակ ու բոց
Բռնկեցավ Մհերին ծոց,
Ախ կը քաշեր որ ու գիշեր
Ու կը խորհեր մռաւէ Մհեր:
«Ռամիկ, մշակ,
Դուք կը լցնեք
Մառան, մարագ
Հոր ու հնձան,
Թե իշխանին, թե մեծատան,
Վոր անոթի, մերկ ի մորեն
Մնաք նորեն»:

Ոեսը կանչեց, ասավ—«Մհեր,
Հարկ տուր հիմի,
Դլխահարկ տուր թազավորի»:

— Ի՞նչ հարկ, ի՞նչ կռո,
Ի՞նչ թագավոր,
Պարտք ե ավել, կ'ուղի հիմի,
Ասավ խիզախ Մհերն Ազնանց:

Ոեսը ձենեց, ձենին յեկան
Գեղ-գեղովի, ճորտ ու մշակ,
Ուսերով վար՝ փոկ ու ճոպան,
Անթերու տակ՝ ըիր ու մահակ:

— Կապեք, ասավ, կապեք ձեռ-վատ,
Յերկաթ զարկեք, տարեք ձգեք
Մութ բռնատուն:
«Վայ, ձեղ, ճորտեր խեղճ ու ախմար,
Ինձ զորավիզ կանգնելու տեղ
Վոսովսին գեմ՝ ձեր հոգեառ,
Վերցրել եք զեն՝
Թափվել վրաս, հանց ձեր ահեղ
Թշնամու գեմ...
Մեկդի քաշիեք, մեկդի հիմի,
Ճամրա ավեք, թող ռեսը գա,
Թազավորի հարկը տանի...
Ասավ Մհեր,

Ու անառիկ բերդի նման
Կանգնավ մնաց:
Գեղ-գեղովի ձեռք զարկեցին
Մհեր բռնեն.
Մհեր հոնքեր ժողվեց իրար,
Լախտը փարտեց,
Ծայրը լախտին դիզավ սանդին,

Աղասանդը փրթավ տեղեն,
Թռավ գնաց՝ կրակ կտրած,
Ու կըթոնի մինչև հիմի:
Շորշոփն հզոր՝ լարած լախտին,
Շանթի նման փոեց զետին,
Փոեց զետին զեղապետին
Ցոթըն որվա մեռելի պետ:

Գեղզեղովի ես վոր տեսան,
Գումար փախան, յեղան ցրիվ,
Հանց չոք խորիվ քամու բերան,
Ծերպ ու ծործոր շունչերն առան:

— Յելավ Մհեր սիրտը՝ խոլոր,
Միտքը՝ մոլոր,
Ճամբա ընկավ,
Ճամբան տեսավ՝
Սարի կանաչ մարմանդներով,
Զորի մարմանջ աղբուրներով,
Վարի հավքեր ուրախզվարթ
Կը թռնեյին, ծափ կուտային,
Տաղով խաղով, ուրախզվարթ:
Մհեր զարձավ՝ նրանց ասավ,
«Յերանիկ ձեզ, վայրի հավքեր,
Դուք որհնած եք, մարդն անիծած,
Ազար, անպարտ,
Ընկերներով ու աղպոր պետ
Կապրիք անհոգ ու սեր կանեք,
Վաչ արտառեր կը ճանչնաք,

Վաչ հարկ ու կոռ, վաչ թագավոր,
Ցերանիկ ձեզ, վայրի հավքեր...»

Անձնահուր Մհեր
Զվեց ու հասավ Պղնձեղաղաք:
Պղնձեղաղիս պարիսպներ ու գուռ
Պինդպղնձակուռ.
Կամուրջ, բուրգ ու բերդ՝
Պինդպղնձակերտ:
Ժուռ լիկավ քաղքի գոեն ու փողան
Հաղար մանեման.
Կանդ առավ մոլոր մեջ պողատային
Առջե փառանցփառ մեկ ապարանքին,
Տիսավ՝ վարպետներ բանձրիկ պատերեն
Կը կանչեն ամուռ.
— Եհեյ, քար բերեք,
Շաղախ ու խիպար:
Բանվորներ առած՝ ուսերնին—մեջքին,
Բարեր ահասոիկ, գույներ ահագին,
Ու սանդուխներով վոլոր վոլորուն,
Կելնեն ու կ'իջնեն,
Ծնկներով գեղեվ,
Սրտով հեվինեվ.

Ու տեսավ Մհեր մեկ տղա բանվոր՝
Քարը շալակին բանձրաքաշ տեղեն
Վար ընկավ զետին ու յեղավ ցընեկ
Գլուխն ու ըղեղ...

— Ես վոր տեսավ Ազնանց Մհեր,
Հանց փոթորանք ծովու վրա,
Վոր հազարան վազրերու պես,
Կըմոմոս ու կը կորդե
Պատ ու պատճեշ,
Բորբ ու բորբոք դարձավ ասավ
Իրեն սըտին ու աշխարքին,
— Ե՞յ, գուք, մշակ, ճորտ ու բանվոր,
Կը շինեք հար գուրք ու դարսպաս,
Ու ձեզ համար
Լուծ ու անուր, զնդան ամուր:

Յերթամ շինեմ բերդ ու պատվար՝
Նեղ ու դժար որվա համար.
Առնեմ իմ հոր զենքերն ու ձին,
Ու Սասմանց տան կուռ կորիճներ՝
Կովիս համար վիզ ու սատար.
Յելնենք գուղար
Աշխարքի դեմ զրկող ու չար.
Վողջ ավերենք
Ու սամկություն բերենք աշխարհ,
Ռամկի որինք ու իբավունք,
Վոր տեր զառնա սամիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին».

ՅԵՐԹԱԲԳ. ԳԼՈՒԽ

Ու կըակված թռավ Մհեր,
Ծեկավ, յելավ
Սիմ ու Սասուն — Սասունա սար:
Սասունա սար՝ վեստ ու վիթխար,
Հանց լերկնամուխ
Ցըլի գլուխ,
Վոր կը ֆնչե գոռ ու ահոիկ
Բուքմլըըրիկ:
Կիրճերու մեջ Սասմա գետեր,
Հանց մերկ ու կեռ կայծակթըրեր,
Են ձյունափառ սեղ Ծովասար,
Վոր աստղերուն և հավասար:

Կը գեգերեր Մհեր անդուկ
Անգըղ գետեն մինչ Սեղանսար,
Մարաթուքեն՝ Ծծմակաքիթ:
Ու կը ֆնտըրեր բերդի համար
Քար ու կապան, լեռ առապար,
Անկ ու հարմար:

Արանց մեկ որ՝ մուլթն ու մոլոր՝
 Մեջ կապանին, խոր ծմակին,
 Մեկ վագր վիրագ ու աճազին,
 Դեմ Մհերին խոպաց, վարգեց
 Ու մռնչաց խոլ զարհուրիկ.
 Մհեր լախոը քաշեց, զարկեց,
 Ճեղքեց գանգը վագրի աճոփիկ,
 Միսը կերավ, մորթը ձղեց
 Կուռ թիկունքին, գլխու վըրան
 Դիշտ ու խալամ:

Գտավ Մհեր մեկ խրոխտ լեռ
 Մեջ բավիղին Մարաթուքա,
 Զերդ բանձրիկ գահ,
 Կողն ու կոնակ՝ գուղձ յերկաթին,
 Ուր կընայեն ամեն զիեն
 Վիհեր մթին վեժանդունդին,
 Քար ու կապան, լեռ առապար,
 Բերդի համար անկ ու հարմար:

Սպնանց Մհեր լախտն առավ ձեռ
 Վագեց իջավ Տարոնա դաշտ,
 Տարոնա դաշտ մհծ գետ ունի,
 Խոր ու բըրոր,
 Ու անունն և Արածանի.
 Հարյուր քառսուն վտակ ու վետ,
 Կը խառնվեն իրարու հետ
 Ու կը հուսեն Տարոնա դետ:

Տեսավ Մհեր՝ ջուրն և հորդեւ,
 Վարար-վարար,
 Ու կ'ավերե գեղ ու հանգեր,
 Արոտ ու վար
 Շինականին ու ռամիկին:
 Խղճաց Մհեր, մրմուռ սրտով
 Վարգեց հասավ թարքե սարին.
 Մեկ ապառաժ վեմ վիթխարի
 Ժեռ քարերին թարքե սարի
 Մղեց, բերեց
 Գլնը-գլնը,
 Իղնը-զղնը
 Բերեց ձգեց են գետի մեջ:
 Գետը բաժնեց յերկու ճյուղի,
 Մնկն աջ գնաց ու մեկը՝ ձախ:
 Զուրերն իջան,
 Առաջվա պես արեվիրես
 Յեղան գեղերն ու հանգաստան
 Շինականին ու ռամիկին:

Տարոնացիք ես վոր տեսան
 Զարմացք ահեն ջուր կտրեցան.
 Փախան, մտան
 Արեվ-Առինձ մհծ շահաստան,
 Վիշապաբերդ, արուրակերտ:
 Արուրի գուրք քառսուն նիգով
 Իրենց հետնուց պինդ գոցեցին:

Մհեր հասավ լախտը ձեռին
Ու յոթն հեղ վորոտմունքով
Կոփեց բերդի զուրք արուրին,
Դոփեց գետին պողպատ վոտքով,
Զենը ձգեց անեղաղոչ,
Ծխնու վրա դողաց դողով
Դուրք արուրին:

«Ե՛յ Տարոնա իշխան-ջոջեր,
Ականթոթափ,
Ժողվեք բերեք, տվեք ինձի
Ձեր արծաթով, հացով-ջրով,
Հարուր վարպետ, վոր վեմ տաշեն,
Հարուր վարպետ, վոր պատ քաշեն.
Բերեք հազար բանվար, մշակ,
Վոր քար կըրեն, յերկաթ կըռեն.
Բերեք հազար բանվոր, մշակ,
Վոր հող թալին, արձիճ հալեն:
Բերեք թի վոչ, ձեր առւն ու տեղ
Ավեր կ'անեմ, հող ու աղուր,
Չորսդին կուտամ՝ հողմերուն կուր:

Ու Մհերի վոտքը յեկան
Աղ ու հացով, խնդիրք-լայով,
Սըհվ-Սոխնձ քաղքի ջոջեր՝
Վաճառապետ ու զանձաշատ,
Ականթոթափ,
Բերին տվին հացն ու արծաթ,
Հարուր վարպետ, վոր վեմ տաշեն,
Հարուր վարպետ, վոր պատ քաշեն,

Բերին հազար բանվոր, մշակ,
Վոր քար կըրեն, յերկաթ կըռեն,
Բերին հազար բանվոր, մշակ,
Վոր հող թալին, արձիճ հալեն:

Վարպետ-բանվոր Մհեր առավ,
Գումար տարագ
Բանձրիկ Սասուն, Սասմա աշխարհ,
Խոլ ու խոժոռ քերծի վրա:
Ու շինեցին հոր քերծին
Բերդ ու պատվար, զերդ կուռ ասպար,
Կայծակ քարով ու վործ-քարով.
Կամրջակաղ փառ ու վիրապ,
Արձիճ լցրին կըի տեղակ
Մեջ հիմերուն,
Արձիճ լցրին խիճի տեղակ,
Մեջ վորմերուն:
Կանզնեցրին գոռ աշտարակ
Սուր սնարին՝ վես ու անել
Ուր լոկ արծվի թեթև և զիանել
Աղս ու նիզով մուխ-յերկաթի
Դուռ-գուանդի:
Ու շինեցին խըրոխտ բուրգեր՝
Բանձր ու բոլոր,
Պատուհաններ՝ աչքով խոլոր,
Կը նայեցին ճամբաներուն
Վոլոր-մոլոր,
Թե հեռավոր, թե մոտավոր:

Ու անունը բերդի դրավ՝
«Մհերի Քենա».

Անունը սոսկ, բերդի վրան
Մինչև եսոր սպառազեն
Դոռ պահապահն:

Գնաց Մհեր՝ բարկ ու կըրակ,
Իջավ Սասմա Աթոռ-քաղաք.
Արև նոր եր աչքը բացել,
Վողջ յերկինքն եր ծով-ձիբանի,
Ծուխը կ'ելներ պալմն-պալմն
Ակուտներեն ու յերգերեն:
Ու որն եսոր տոն — կիրակի,
Ժամն եր կանգնած պատարագի:
Մհեր մտավ Առյուծաբերդ,
Զոջանց իր տուն,
Յոթը կողպեք պատուհանեն
Հանեց Դավթի դրահ ու վերտ,
Վոսկի դոտիկ՝ յոթը պատիկ,
Վահան լանջքին,
Վառ սաղավարտ դրավ գլխին,
Կոտեց մեջքին
Թուր-Հավլունին, Թուր Կայծակին,
Յելավ վուքով դարկեց գոմի
Տասը նիգով աղխուկ դռան,
Հնկավ ջախջախ ու ծխնեհան
Դուռն յերկաթի.
Հանեց Դավթի
Զին հրեղեն՝ բռնած բաշեն:

Զեռքը նյուսին դրավ՝ հեծնի,
Ճնճղափորիկ հասավ ժամեն,
Ցեկավ մթնած՝ վրան թնդաց.
Ու արմուկեն քաշեց կատղած,
«Չքվիս, Մհեր,
Զար, անառակ,
Նաշըդ տեսնեմ,
Դնտինն անցնես»:

Հանց արմուկով հըրեց Մհեր
Հեստ հորեղբոր,
Արմուկն առավ տկոաներուն
Ու ակունիքն յեղան փշուր
Հեստ հորեղբոր:

Հեծավ Մհերն արևազուն,
Հեծավ խթեց հընդեն ձին:
Թոռավ կանգնեց քաղաքամեջ,
Աջ ու ձեռքին
Հաղարաշող թուր—Կայծակին:
Հանց գոռամպրոպ Անդոկ լեռան
Կը կայծկլուե—կը վորոտա,
Գոռաց Մհեր Սասնու վրան,
— Ե՛յ գուք, Սասմա ծռեր ու ճետ,
Ե՛յ գուք, գեղջուկ, մշակ ու ճորտ,
Ջեռնել գիտցող նիզակ ու նետ,
Ջեռնել գիտցող գուրզ ու գեղարդ,
Թող ամենքը ասպազինվին,
Գան ինձի ճետ —
Քանդենք հիմեն աշխարհը չար
Ու ասմկությունն բերենք աշխարհ,

Թամէկի որենք ու իրավունք,
Վոր տեր գառնա սամիկն իրեն
Արդար հացին, սուրբ վաստակին:

Ու յետ յեկավ Մհերի ձեն
Սալնո ձորեն, Ծոփաց Դուսան,
Ճապաղ—Զուրեն, Մշու Դուրեն,
Խութա Քարեն, Գրգուռ սարեն,
Փովեց նորեն
Գոռպոռալեն, Հաղարաձեն,
Սաօնո վըրեն:

ԶՈՐՅՈՒԹԻՒՆ

Զո՞չ տան պետեր, խոլ հոկաներ—
Զենով Ռնան ու Խոր Դուսան,
Թառ—ճնճղուկ ու Խոր—Մանուկ,
Վժիկ—Մխոս, Բռնած—Կուրիկ,
Զոջ—Վիրապ ու Ճող—Վիրապ,
Վոստանիկներ ու Սեպուհներ,
Ու Աղատներ ու Ավատներ,
Հաղած-կապած վերտ ու վահան,
Սուր ու աշտե, տեղ ու նիզակ,
Իրենց առջեմն առած-բերած
Հոծ ժողովուրդ — դեղ ու քաղաք,
Գեղջուկ, մշակ, ճորտ ու սամիկ,
Հաղած—կապած զրահ-շապիկ,
Գունդ ու մկունդ, պարս ու աղեղ,
Գրոհ տվին, յեկան մեկտեղ
Դնմ Մհերին ու ձենեցին.—
— Ե'յ դեվ Մհեր,
Վար եջ ձիեն, ժամտուն գընա,
Լաց, որոտա, ու դարձ արա
Խորհուրդներեն չար սատանին:

Կոթվ կուղես... Մեղքը վըրեդ,
Եսոր և եթ
Քեզ կը խառնենք հազար տարվա
Մեռելոց հետ...

Մհեր կեցավ անպատասխան,
Անպատասխան իեռ անսասան,
Բոլոր մեկտեղ գառան յետ-յետ,
Բոլոր մեկտեղ կանգնան մեկն,
Բոլոր մեկտեղ սալ ու գետին
Վոտներով պիրկ՝ պինդ գոփեցին,
Տեղերով կուռ հանց կովի կանչ
Վահանները պինդ կոփեցին,
Թինդ ու թափով թռան առաջ,
Եկահելով, զոռգոռալով,
Հողմի նման խրստ խորացան,
Յեկան վետ-վետ ու իրենց հետ
Ամպ ու փոշի, մուղտ ու մղեղ,
Գոռոթ տվին,
Դոռոթ տվին,
Կուռ կոռւփիներ ցցած ահեղ,
Թռան, լեկան, յեկան հասան,
Մհեր գլեն,
Մհեր ճմլեն,—
Մհեր խթեց Զին հրեղեն
Ու միրճից մեջ ամբոխին,
Ճեղքեց ամբոխն յերկու մասի,
Մեկն աջ թալեց ու մեկը ձախ.
Կեսն՝ արեցաթ, կեսն՝ արևպատ,
Մղեկ, լեկավ, կանգնավ խիզախ
Դեմ-հանդիման, ձակատ-ձակատ,

Իշխաններուն, Սեպուհներուն,
Եվաններուն, Ազատներուն,
Քաշեց զորկեց Թուր-Հավլունին,
Թուր-Հավլունին, հանց հուր-կայծակ
Մեջ մթագին ամպ ու զամալին,
Կորեց, թափեց,
Ելրեց, լափեց
Ոչ զոր ընկավ թըի վրան,
Ինչ զոր ընկավ հրի բերան,
Սրբունն յելավ զոչ զոչ զնաց..
Մնացածներ գումար փախան,
Ֆեղան ցրիվ, հանց չոր խոխիվ...

Ահ ազռավի մռայլ կառանչ՝
Մհ լուրն հաստի Սասմա ականջ
Իշխան, ջոջեր, ժամերեցներ
Յելան ժամի կոչնակ տվին,
Բւ չորս զինն ծեր-հալեվոր,
Մհեր ու մանուկ, աղքատ, հարուստ
Ժամ ժողվեցան, նորեն յեկան,
Ելիք-ալիք ծովու նման,
Ռով կապեցին ժամի բոլոր:
Իշխան, ջոջեր, ժամերեցներ
Ու իրենց հետ յերդումարդով
Նասան լման
Կափք արին զոռ Մհերին.
Անիծվես զնւ,
Ջարը՛դ Մհեր,
Դհե, ներհակ նեռ,

Դնւ, դեկ զասման,
Դնւ, վոր կուղեա՝ աշխարհ քանգես,
Ծարավ մընաս ու անոթի,
Անձետ մընաս ու անորդի,
Մաճ ուղենաս, չդժնիս մտհ,
Մինչև Քրիստոս դատաստան գա՝
Քո դատ կըտես

Ու անեծքը հասավ բռնեց
Մհերին,
Գետինն ել չեր կարող տաճի
Մհերին,
Զիու վոտքը ծունկերն ի վեր
Հողերու մեջ կը միրճիկիր
Մհեր ուժով, ուժով-զորով
Հասավ հորմագոր գերեզմանին,
Գրկեց հողվաբքն ասավ լալով.
— Վեր յել, հերիկ,
Վեր յել, մերիկ,
Մեկ ճար արեք
Չեր Մհերին:
Ու հերն ու մեր գերեզմանին
Լացին, ասին.
— Գնա, վորդի, Տոսպան բլուր,
Ագուլու այր,
Ու քար քաղե, ավաղ մաղե,
Լաց ու զղջա,
Վոր Քրիստոս քեզի լողճա,
Թողոթյուն տա:

Յերկիրն ել չեր ուզի տաճի
Մհերին.
Արեգակն ել աչքի նման
Մհոելին,
Պաղ կընայեր ու լուս չեր տա
Մհերին:
Զիու վոտքը ծունկերն ի վեր
Հողերու մեջ կը միրճիկիր,
Ուժով-զորով գնաց Մհեր,
Յեկավ, հասավ վաճա ծովուն:
Ազնավու Քար բացվեց մեկեն,
Սուավ-կալավ մեջ իր ծոցին
Մհերն ու Զին,
Ազնավու Քար գոցվեց նորեն
Նըրա վըրեն:

Մեջ անձավին անմահ, անմեռ,
Կա ու կապրի Ցասման Մհեր,
Գլխու վերս — նըսիմ ճրագ՝
Գիշեր ցերեկ հավիտան վառ,
Խմած ջուրը՝ մեկ ըսկահակ,
Հացը որեւ՝ յերեք նշիարտ
Մեկ խուրձ առույտ Զիու առաջ
Ամառ-ձմեռ դալար — կանաչ:
Ու կըմտքե անմահ Մհեր
Աշխարդի բան,
Եշխարքի բան, հանց վոր իժուն,
Կը խեթընե սիրտն ու հոգին:
Ու վոչ կուլա, վոչ կը զղջա,

Վոր Քրիստոս խղճա-գթա,
Վես արարքին թողություն տա:

Աւ թիռ կուղան
Քարդ-բարդ ամոլեր՝ հրով-ջրով,
Լույս Մասիսի վեհ գագաթեն,
Սիփան սարեն, Ծիպան ծովեն,
Կայծակ կուտան
Ազուավու լերկ Քարի վրեն
Աւ Մհերի զոց Դուռն ի վեր,
Կը գոնդոռան, կը վորոտան,
Փըլսրին, կերթան:

Մհեր ալրեն, Քարի խորեն
Կու կը թնդա, զղորդ կուտա
Բարկութինեն:
Կը վրընջառ ու կը գեփե
Զին սանձակոծ, կրակ ու բոց,
Աւ կը ժամեն Մհերն ու Զին
Աշխարհն հիմքեն:

Ամեն տարի որն Համբարձման,
Յերբ իրարու համբույր կուտան
Յերկինք-յերկիր ու հուր ու ջուր
Ամեն տարի որն Համբարձման,
Յերբ կը բացվի ամեն վակ դուռ,
Կը գախենան զեզ ու քաղաք.
Թե կը բացվի Ազուավու Քար,
Կ'ունի Մհեր արե-աշխարհ:

Դեղ-գեղովի, քաղաք-քաղքով,
Արտասուրով
Կը պաղատեն Քրիստոսին
Զար Մհերին կապե-բանգե,
Վոր դուրս չըդա՝ աշխարհ քանդե:

Մեկ Համբարձման որ, յերբ Մհերի Դուռ
Նորեն բաց յեղավ, Ազուավու անձավ
Մեկ ծերոն հովիվ ներս մտավ, տեսավ
Մեկ պարթի վհս-մարդ՝
Գլխին սաղավարտ,
Հեծած կրակ՝ Զին,
Կայծակը ձեսին,
Մթան մեջ կանգուն:

Հարցուց, — Ո՞վ ես դուն
— Մհերն եմ իս, Դավթի տղան,
Դու, հալելոր, մւստի կուգաս:
— Լույս աշխարքեն, հովիվն ասավ:
— Աշխարքն են ե, ինչպես վոր եր.
Հարցուց Մհեր:
— Հա, ենպիս ե, ինչպես վոր եր.
Համբավ տվավ հովիվը ծեր:
— Նորեն սամիկ դառ կըդատի,
Աշխարհ կուտե,

Ու կը մնա ինքն անոթի՞,
Հարցուց Մհեր:

— Հա, եղագաս ե, Աղնանց Մհեր:

— Դե, դարձ գնա քո չար աշխարհ,
Խոր զայրութքով ասավ Մհեր:

— Դու լիբր սիխտի դուրս գաս աշխարհ,
Հարցում արավ հովիվը ծեր:

— Յերբ շեղբն հասնի
Վուկորին,
Ռամիկ կանչե
Մհերին:
Պատղամ տվավ Յասման Մհեր:

Ու դուրս յելավ հովիվն այրեն,
Սպասվու Քար գոցվեց նորեն:

Մինչև եսոր դեռ
Ենտեղ ե Մհեր,
Հուրնի Զին հեծած,
Սաղավարտ կապած,
Կալծակն աջ ձեռին,
Վահան՝ ձախ ձեռին,
Հաղած կուռ ասպար.
Միշտ ու միալար

Կըսպասե տննինջ՝
Հողին ականջին
Ու ականջը՝
Ռամկի կանչին:

Են որեն վեր անցան դարեր,
Յերբ ռամկասեր Մհերը վես՝
Անձավի մեջ բանդվեց անել.
Անցան հազար տարիներ չար,
Նորեն հազար չար տար, ներ,
Դառն ու դաժան, մութն ու մլար:
Ռամիկը, հանց ճորտ ու ստրուկ,
Բանվոր, մշակ, գերի-գրաստ,
Կ'տառապեր ու կ'աշխատեր,
Կ'տառապեր ու կը տքներ
Արքայ երու, իշխաններու,
Սեպահներու, հարուստներու
Շահի համար անհաղ, անկուշտ:
Ամենուրեք ու ամեն տեղ
Կ'չարչարվեր անդուլ, անխոնչ,
Ծովերու մեջ ու բովերու,
Բարկ ու կրակ արեի տակ,
Սառնամանի հողմերու տակ,
Ու կը մնար նորեն-նորեն
Խեղճ, անոթի, մերկ ի մորեն,
Անիրավունք ու անբաժին:

Տարվե տարի ու որի որ
Լուծը դաժան՝
Զար բռնության
Կը ծանրանար
Ռամկի վրան:
Ու մինչև վոր շեղբը հասավ,
Հասավ ռամկի չոր վոսկորին:

Յերբ շեղբն հասավ չոր վոսկորին
Ահեղ ցագեն ճըչաց ռամիկ:
Քաղաքներեն ու գյուղերեն,
Ու ծովերեն ու բովերեն,
Դարբնոցներու, հրեն-բոցին
Ճորտ ու ըստրուկ, բանվոր մշակ,
Աղքատ ու զուրկ ձեն տվեցին
Սահի պատրաստ, ոտզմահրավեր,
Զեն տվեցին ու կանչեցին
Վես Մհերին:
Ամեն գիեն կանչերը հուր՝
Հազար, հազար, հազար ու բյուր,
Հանց ծովերու փոթորիկներ,
Հանց ծովերու գոռ ալիքներ,
Յեկան, յեկան ու կովեցին
Մհերի Դուռ, Ազուավու Քար:

Լսից Մհեր մեջ անձավին
Կանչերը հուր, հազար ու բյուր՝
Սահի պատրաստ, ոտզմահրավեր,
Բազուկն յիրկաթ պրկեց Մհեր,
Խոլ մըրկվեց սիրտն ու հոգին,

Առև վրբնջաց Զին հրեղեն
 Աւ ժաժեցին աշխարհի հիմեն
 Աւ ձեղքեցին քար-ապառաժ:
 Թուը Հավլունին կայծակ տվալ՝
 Դռու կայծակներ ահեղաթափ,
 Խորտակեցին կապանք ու դուռ,
 Յելավ Մհեր աքե-աշխարհ:
 Աւ վարգեցին, թռան, յեկան
 Հազար, հազար, հազար ու բյուր
 Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,
 Ամեն դիեն թռան, յեկան
 Նորեն հազար, հազար ու բյուր
 Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,
 Ծով կապեցին Մհերի շուրջ,
 Ծով կապեցին փոթորկաշունչ.
 Գրոհ տվին ըուլոր մեկտեղ՝
 Արքաներու, իշխաններու,
 Սեպուհներու, ավատներու,
 Հարուստներու վրա մեկտեղ.
 Ավերեցին աշխարհը չար,
 Աւ ուսմկություն բերին աշխարհ,
 Ռամկի որենք ու իրավունք,
 Վոր տեր դառնա ուամիկն իրեն
 Սուրբ վաստակին, արդար հային:

Պատ. խմբագիր՝ Արքան
 Տեխ. խմբագիր՝ Ա, Ալեքսանդրան
 Սըլազըլ Ա, Արքաքանդան

Ժբճեվ 1919, Յերեվան 1937 թ.

Գլամիլիանի լիազոր՝ Ա-3053. Հրատ. 4412.

Պատվ. 1250. Տիրաժ 6000.

Բուղթ 74X110, տպ. 2^{3/4} մամ.

Մեկ մամ. 51,200 նիշ, Հեղինակ. 1^{3/4} մամ.


Հանձնված և արտադրության 23 դեկտ. 1937 թ.

Ատորագրված և սպելու 8 հունվարի 1938 թ.

Գինը 2 լ. Կազմը 1-60 կ.

Գևահրատի ապարան, Յերեման, Լենինի փող. 65

023



ՀՀ Ազգային գրադարան



NL0340290

33028

ԳԻՒՅ 2 Ա.

Ա. ИСААКЯН
САСУНСКИЙ МГЕР
Гиз Арм. ССР, Ереван, 1938